



# Հրանտ Մաթևոսյան

## Գիրք ճանապարհի

Ընթացքի, մաքառումի, ճանապարհի այս գիրքը՝ այս «Գիրք ճանապարհին», ինացության լույսի այս հեղեղը մեր անբառ արտոնների վրա, հանրության գանգվածից մեզ դենքի և անունի բերող այս արարիչ հայացքը՝ որ յուրաքանչյուրիս մեջ իրեն է տեսնում և իր մեջ յուրաքանչյուրիս, լուռ հպատակության ճամբարներից մեզ դուրս քշող այս սուր ու չար ճիչը, գամփոփ հավատարիմ այս աղիողորմը մարդու հայրենիքի մեր ծանր կապանքի առաջ, բռնության քարից մարդու մեր պատկերը կորզող այս երդվյալ ջանքը, անասունից գատվելու, քարից թոթափվելու, թոթափումի մեր գորությունը եղավ և բացարձակեց նաև մեր իսկ անթոթափելի թշնամանքը թոթափումի մեր գորության հանդեպ. գիրքը խարույկի տրվեց:

Եթե հավերժ այս քանդումի և անվերջ այս նորոգումի մեջ խոսքը մեղք և շնորհ ունի, - ունի՛, «Ի սկզբանե էր բանն», հավատավոր բանի այս գիրքը անցյալի և ապագայի միջև անկոր մարդկանց մեր ներկան էր բացում, և այս «Գիրք ճանապարհին» մենք այրեցինք,

և բացվեց, ծավալվեց, գնաց ու տարիներով գնաց եղծված բանի ամուլ աշխարհը լուռ սպանդի, լծկանային կոռի, անլեզու հպատակության աշխարհը: Բայց այդ խարդախված բանի այդ լուռ թագավորությունը «Գրքի» այս լայնաթռիչ ու բարձր հաղթականարի սահմանաայտուններից դենն է, գիրքը այդ երկրի վրա բացվող դարպասներ չունի, հաղթականարի այս կողմը բարձր մարդկանց Չարենցյան մեր աշխարհն է, անխաթար բանի նորոգ աշխարհը, հայրենի պղնձակոփ ամրոցը և պղնձե գայլը այդ ամրոցի ճակատին: